Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ДШЧ
296, 297, 298
299, 300, 301
302, 303, 304,
305, 306, 307,
308, 309, 310, 311

2000

ՀԱՍԱՐԱԿԱՑ

ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՄԱՐԵԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՏՈՐ Զ.

ԿԵՆԴԱՆ ԲՆԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

Zoologie.

ՁՄՈՒԹՆԻՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԵԵԱՆ
1858

ԿԵՆԴԱՆԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Լաւ կ
301

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՅՈՐ Զ.

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ



ՁՄԻՒՌՆԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԻՏԵԼԱՆ
1858

17955

(7337-52)
28-301

301-2003

ԱՐԻՈՑ ԸՆԹԵՐՑՈՂ

ԱՍՍԱՐԱԿԱՑ ԹԱՆԴԱՐԱՆ մեկագրով տեսարանները այսուհետև պիտի սկսին ապուռիլ ու հրատարակիլ հետզհետե։ Ասոնց մեջ պիտի լսուին բոլոր գլխաւոր գիտութեանց մի մեծն ձայնը։

Գաղտնաբար Կոստանդինեան։

ՄԷԿ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱՐԱՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՑ

ԿՐԻԱՆԵՐԸ տարիներով առանց ուտելու կրնան ապրիլ, և եթէ գլուխնին կտրես՝ տակաւին երկու շաբաթ կեանք կ'ունենան։

Մարդս քանի որ տարիքը առնէ՝ արեան կարմրութիւնն ալ կ'աւելնայ։

Կէլսիոսեան ջերմաչափին 39° աստիճանը մարդուս արեան ջերմութեան աստիճանն է։

Շեքսպիրին երկու կողերուն վրայ ինն-ական ծակեր կան, որոնք իրեն թոքի տեղ կը ծառայեն։

Գամաճները արտաքոյ կարգի փոքր անդամերով մարդիկ են, որոնք սովորաբար խոշոր գլուխ կ'ունենան և որուն-նին կարճ կ'ըլլի. քնութիւնին ընդհանրապէս կասկածոտ և բարկացող ու տրժդոհ. փափաքնին և զբօսանքնին տղայական են։ Կը պատահի երբեմն ալ որչափ որ փոքր սակայն համեմատեալ անդամերով ու զգաստ խելքով ըլլին։ Գամաճները կարճ ժողովուրդներու պէս (որոնք զանազան և տարբեր երկիր կը բնակին) ազգ են, բայց գամաճ ըլլալը շատ հեղ պատահական է։ Լեհաց թագաւորը ծաղրածու մը ունէր՝ 30 բթաչափ հասակաւ. ծնած ժամանակը 9 բթաչափ էր և 96 տրամ ծանրութիւն ունէր։

Մարդուս ուղիղը փղէն զատ ամէն կենդանեաց ուղղերէն աւելի մեծ է։

Շատ փորձուած է որ տղայ մը իր ծընած տեղը ինչ հասակ որ ունի, չորս անգամ այնչափ կ'ըլլայ իր բոլոր ունենալու հասակը։

Տեսակ մը ձուկ կայ, որ գիշերը փոս-

փորութեամբ լոյս կու տայ ծուխու մէջ, և եթէ ջրէն դուրս հանուի՝ ժամու մը չափ ձայն կը հանէ։

Արեան սովորական գոյնը կարմիր է (թէպէտև զանազան տեսակ սողուններ, ևն. կան, որոնք ճերմակ արիւն ունին)։ Արիւնը թէ որ օդին հանուի՝ երկու տեսակ նիւթի կը զատուի. մէկը կանաչի զարնող դեղին կ'ըլլայ, որ և ճերմակ արիւն կ'ըսուի, իսկ երկրորդը թանձր կըլլի և կարմիր։

Եթէ կենդանիի մը ելած արիւնը անմիջապէս մանրացուցչնայինք՝ կը տեսնենք որ կարմիր արիւնը միլիոնաւոր կարմիր գնտակեր է՝ ճերմակ արիւնին մէջ կեցած, և որ կենդանիին որ աս արեան գնտակերը քիչ են՝ այնչափ ալ ան կենդանիին ջերմութիւնը տկար կ'ըլլայ, իսկ որչափ որ շատ ըլլի՝ ջերմութիւնը աւելի կ'ըլլի։ Այս գնտակերուն կեդրոնը սև կէտ մը կը դանուի, որ դեռ չգիտցուած է ինչ ըլլալը։

Ամեն կենդանեաց արեան գնտակերը միաչափ չեն, մանաւանդ որ բոլոր կա-

թքնկեր կենդանեաց արեան գնտակեր-
ռուն ձևը կլոր է, իսկ ձուկերուն, թռչ-
ունները ու սողնոց արեան գնտակերը
հաւկթաձև են։

Մարդս երկու հարիւր քառասուն է.
ուրթը հատ ոսկր ունի։

Ռուին թէ վերի և թէ վարի կոուցե-
ը շարժուն են։

Ոդան կարմիրը տունկի մը վրայ յա-
ռաջ եկող որդ մ'է։

Նաւարկող խեցի կը կայ թէ թիով և
թէ առաղաստով։

Սոսկալի օձերէն մէկն է Յարամանի
օձը, որ պոչին ծայրը առանձգական օղա-
կեր ունի, որոնք քալելու տեղը ձայն
կը հանեն և ամեն տարի աս օղակերէն
մէկ մէկ հատ կ'աւելնայ։

Պօան ալ սոսկալի օձերէն մէկն է, որ
թոյն չունի, հապա ասատիկ սեղմելով
կը մեռցնէ՝ ամենայաղթ չորքոտանիներն
ալ։ Ուտելէն ետքը՝ թմրած կը մնայ,

ր ժամանակը մինակ գինքը կրնան բրդ-
նել։ Աստր կգակին բացուածքը ահագին
է և առաձգական։ Վրայի թեփերը քա-
ռակուսի են։

Չկերը մոքի դուրս կերպիս. կ'աճէին,
եթէ իրենց հաւկիթները ուտող ու ջնջ-
ջող թշնամիներէ ազատ մնային։ Ճուկ
կը գտնուի որ կէս լիպրէ կը կշռէ և
100,000 հաւկիթ կ'ունենայ։ Սերմին ը-
սուած ձկան հաւկիթներուն 7 հատը 1
ցորենաձաւի ծանրութիւն կ'ունենան.
ինքը 119 լիպրէ ծանրութեամբ հաւկիթ
կ'ածէ, որ ըսել է 7,653,000 հատ։
Լէվենհոք անուանի բնագէտը ըսինկա
ձկան փորը 9,000,000 հաւ-
կիթ համրեց, և ան հաշուով գտաւ որ
եթէ ըսինկա ձկան ունեցած ամեն հաւ-
կիթները մնասէ, վատնէ, այսինքն ի-
րենց ուտող թշնամիներէ ազատ մնալով
ձուկ դառնային՝ 8 տարուան մէջ ահա-
գին Ովկիանոսին երեսը ըսինկա ձուկով
ը լեցուէր։

Ընդունը ջրէն ուռնի։ Սրտէն մարմնին
ամեն կողմը կը հոսի։ Երակային բաբախ-

մամբնէ որ արիւնը կը սփռուի. ասիկա կերակրէն առաջ (ըստ որում թէ կերակրին մարսողութեամբը և թէ զանազան կրիւք երակային զարնուածքը կը փոփոխի) առողջ մարդունը հասարակօրէն 60–70 անգամ կ'ելլէ բոպէի մը մէջ. մանկանցը 80–90, ծերոցը՝ 50–60։ Երբ բոպէի մը մէջ 100 զարնէ՝ արագագոյնն է, իսկ եթէ 150՝ վտանգաւոր, վասն զի մարմինին խիստ անհաւասարակշիռ տաքութիւնը կը ցուցնէ։

Ան որ կարող է 8–10 մաս հեռաւորութենէ աւելի հեռի տեղէ մը գէր կարդալ՝ հեռատես կ'ըսուի, իսկ ան որ ասկէ քիչ՝ կարճատես։

Եղած է և կրնայ ըլլալ որ մարդ մը մեռնելէն ետքը դեռ ճաղերը ու եղունգերը աճին.

Եղած է և կրնայ ըլլալ որ ոմանց տըղայոց ձակտին վրայ մուրթին լոյս տեսնուի. ասանկ բան մը կրնայ պատահիլ. ինչպէս և եղաւ Ծիբաւոյի մէջ Ֆէրրէթթի անունով տղու մը, և Կոստանդնուպօ-

լիս Հայ տղու մը։

Բայց աս լոյսը տղուն տարիքին հետ կը տկարանայ։ Այսոր պատճառը կամ՝ փոսփորուԹեան է և կամ՝ էլեկտրուԹեան։

Այրենիները իրենց նետերը նեխեալ սատակերու մէջ խօԹելով կը Թիւնաւորեն. քանզի մեռեալ սատակերը Թունաւոր կ'ելլին, և զգուշանալ կ'ուզէ մանաւանդ տղայոց որ մեռած կենդանիի չի դպչին։

Մամուկի հիւսուածքը՝ չկրնար շերամին մետաքսին տուած օդտին տեղը բռնել. վասնզի մէկդի Թողլով երկուքին ալ գործած Թելերուն աղնուութիւնը, առաջին անհամեմատուԹիւնը ան է որ 12 մամուկ հազիւ 1 շերամի գործածին կրնան հասնիլ, անանկ որ 1 լիպր մետաքսը 2304 շերամի գործ է, իսկ 27348 մամուկի, մանաւանդ որ մամուկին էգը միայն կը հիւսէ, որով 2304 շերամին հիւսածը՝ 54696 մամուկ հազիւ կրնան գործել։

Ծովին ջուրը մութին կը փայլի. ասոր պատճառը ոմանք էլեկտրութեան կը տան ոմանք ծովու կպրանման նիւթոց բորբոքելուն, և ոմանք կենդանեաց։ Ամենէն հաւանական և փորձուածն է թէ ծովուն երբեմն "լուսաւոր երևիլը" փոսփորութիւն ունեցող ձուկերէ, ճըճիներէ, ևն. ուրիշ ծովու որդերէ ու կինդանիներէ յառաջ կը գայ։

Գնտաձև ու ձուաձև ճճիներ կան, որոնք փոշիանման փոքրկութիւն ունին և դեղնագոյն լուսով կը ճօճան. գանազան խեցեմորթեր ալ կան, որոնք լոյս կը տան, մանաւանդ կենդանը ոյսեր, պոլիպոտեր, ևն. ևն։

Մեդուսաներն ալ լոյս փոսփորութիւն կ'արձակեն, ինչպէս և տեսնուեցաւ մեդուսայիմը մարմինը ճզմելով, որմէ լուսաւոր հեղուկ մը դուրս եկաւ։

Ծովային կենդանիներ ալ կան, որոնք մեռնելնէն ետքը իրենց սատակը փոսփորական լոյս կը տայ, ինչպէս են ռինկա և Ռեդիպ ձկերը։

Հորթերուն եղջիւրները իրենց 2ռ տարին

կը բուսանին և տարիքնին՝ եղջիւրներուն վրայ եղած յօդերուն միջոցներուն թիւէն կը ճանաչուի։

Զկանց բեղմնաւորուիլը գլխաւորաբար առանց զուգաւորութեան կ'ըլլի. եգը հաւկիթները կը ծնանի, և ետքը արուն վրանին կը ցնցէ։

Թռչց կը գտնուին ձուկեր, ինչպէս շանաձուկերը, որոնք զուգաւորութիւն կը բեղմնաւորին։

Եգիպտոս խիստ շատ գտնուող օձ մը կայ, որ Ֆարը կ'ըսուի և գլխաւոր յատկութիւն մը ունի, որ երբ գլխին ետևի կողմը ճնշուի՝ երկայն և շտապակ գաւազանի նման կը թռմրի, և եթէ ճնշումը վերնայ՝ վերստին կը շարժի. կը կարծուի որ աս հնարքովն էր որ Եգիպտացի թովիչները (1) կրցան Մովսէսին պէս օձը գաւազանի դարձընել, և ետքը յօձ փոխակերպել։

---

(1). Թովչութիւն արհեստ մ'է, որով օձերը կրնան կանչել և իրենց առջևը բերել տալ։

Հսկայ կ'ըսուին անոնք որ հասարակ մարդու հասակէն աւելի մեծ կ'ըլլան, զոր օրինակ՝ 1676ին Հանովէր մեռած մարդը, որ 10 ոտք և 5 մատ երկայնութիւն ունէր, ևն, ևն։ Հին ժամանակը շատ հսկաներ կը յիշուին. ոմանք կ'ըսեն որ հին ժամանակը երկրիս ջերմութիւնը հիմակուանէ աւելի էր, որով և ան ջերմութեամբ յառաջ եկած խոտերն ու բոյսերն ալ հիմակուաններէն աւելի զօրաւորէին, ու անոնցմով սնուած մարդերն ալ հիմակուաններէն աւելի զօրաւոր և յաղթանդամ կ'ըլլային։ Ուրիշներ ալ դիպուածական են կ'ըսեն, և ոմանք ալ ցեղու աղդ են կ'ըսեն հսկայից համար։

Օր մը պիտի գայ որ ասանկ յաճախ կիտորսութեամբ պալէնաները պիտի ջնջուին և սերունդներն երկրիս վրայէն անյայտ պիտի ըլլայ ան կենդանիներուն պէս, որոնց ցեղը հիմա չդտնուիր, այլ միայն ոսկերոտիքներն։

Զուկերը օդալից փամփուշտ մը ունին ներսերնին, զոր ջրով լեցնելով կը ծան-

բանան վար կ'իջնան և ջուրը պարպելով ու օդ առնելով վեր երեսը կ'ելլեն. Բայց բանը հոս է որ ծովագուն տակը ինչպէս օդ կը գտնեն և կը լեցնեն ան փամփուշտին մէջ. աս միայն գիտենք որ ասոր համար տարբեր գործարան մը ունին և փամփշտին մէջ լեցուած օդը բորակածնի և թթուածնի միաւորութիւն մ'է.

Օ. օրաւոր մարդումը ձայնը մինչ 800 ոտք կրնայ հեռի երթալ.

Զկանց վրայ արտաքին ականջ չտեսնուիր, բայց լսելու ներքին գործարան ունին. աս ներքին ականջը այնչափ համառօտ կազմուածք ունի, որ ձայներուն ներդաշնակութիւնը չկրնար զանազանել հապա միակ անորոշ ձայն մը.

Եթէ մերկ աչքով նայելու ըլլանք սեռ ճանճի վրայ՝ 2 խոշոր աչքեր կը տեսնենք վրան, իսկ եթէ խոշորացուցիչով մը զննելու ըլլանք՝ 8000 աչքի ոսպ կը դիտուի ճանճերուն աչքին մէջը, և ամէն մէկ ոսպը մէկ կատարեալ աչքի տեսողական

30/-2903

(7337-57)

զօրութիւնը ունին։ Ուրիշ շատ ասանկ միջատներ կան, ինչպէս և մեղուն որ 7000 աչք ունի։

Աշխարհիս վրայ 1,000,000,000 մարդ կայ և

ամեն	մէկ	մանրերկրորդին	1	հոգի	կը մեռնի
"		վայրկենին	60		"
"		ժամին	3400		"
"		օրին	8 2000		"
"		տարի	30 000 000		"

Այս հաշուով ամեն մէկ 33 տարիին հազար միլիոն մարդ կը մեռնի և նոյն չափ տեղը կը դայ, կ'ըսեն ալ թէ առաւելնալու վրայ է։

Կոկորդիլոսը երկակենցաղ կենդանի մ'է չորս կարճ ու հաստ թաթերու վրայ, ահագին մարմին մը ունի և պոչ մը. բոլորովին հաստ թեփերով պատած՝ կեալէ, առջի երկու թաթերուն վրայ 5 ական մատեր ունի, իսկ ետևիններուն վրայ 4ական. ասոնց մատերուն մինակ ներքին 3 մատերը եղունգ ունի։ Աչքերնին 3 թարթիչ ունի. սոսկալի ակռաներով և պինդ ապինդ թեփերով ծածկուած ահագին գազան մ'է։

Եգիպտոսի կոկորդիլոսը 25 — 30 ոտնաչափ երկայնութիւն կ'ունենայ. իր հաւկիթները, որոնք 50 — 60ի չափ կ'ելլին՝ ջրէ դուրս աւազին մէջ կը թաղէ, որ արեւուն ջերմութենէն կ'եռլեն ձագերը. բայց խիստ շատ թշնամի ունի իր հաւկիթներուն, որոնց գլխաւորն է Ֆիլոսը՝ առ կերպիւ կոկորդիլոսին ցեղը օր ըստ օրէ քիչնալու վրայ է.

Մրջնառիւծը (գամէլէօն) գլխաւոր յատկութիւն մը ունի. ինչ գունաւոր նիւթի մը քով որ դնես՝ նոյն գոյնը կ'ըստանայ.

Մարդուս արեան գնտակները[1] — 375 գիծ տրամագիծ ունին.

Սալամանդրը գորտի տեսակ կենդանի մ'է, 12—15 օրը հեղմը մորթը կը փոխէ. կրակին մէջը եթէ ձգես՝ կրնայ քիչմը ատեն զինքը պահպանել մարմնէն հանած կպչիւն հիւթովը. եթէ սալամանդրին թաթը կտրելով զինքը ջուրը դնես՝ 8 օրէն թաթը կ'ամբողջանայ, նաև թէեր ուրե-

ղը հանեա գլխուն մէջէն՝ դեռ ամեն կեանական գործողութեամբ շատ ատեն կ'ապրի։

Ատելապերկի այրին ջրերուն մէջ ձուկ մը կայ, որ կը տեսնէ, ու կ'ապրի բոլորովին զրկուած ըլլալով լոյսէն։

Փոսուրան պզտի միջատ մ'է, որ գիշերները դուրս կ'ելլէ։ Փոսուրաներուն գլխաւոր յատկութիւններն է որ մութին լոյս կ'արձակեն, իրենց փորերուն վերջի մասերէն։ Փոսուրան չիմեռած լոյսը կը հատնի։

Ուրիշ շատ ասանկ լոյս արձակող միջատներ ալ կան, և անանկ զօրաւոր՝ որ կրնայ գիշերը անոնց լուսովը կարդացուիլ և ճամբայ երթալ։

Մորդկանց մէջ շատ այլանդակ և անձոռնի ձևեր կան, ինչպէս Նիու Գրամպերլանտի մէջ 2 գլխով և 4 թևով տղայ մը ծնաւ։

1628ին երկու աղջիկ ծնաւ, որ իրարու մէջացած էին։

1819ին Կարդոյ կողմերը մանուկ մը ծնաւ, որ մօրուք ունէր։

Տրապիզոնի մէջ 80 տարեկան կնոջ մը ձակատը 2 մատնաչափի չափ եղջիւր մը բուսաւ ու 3 տարիէն ինկաւ։

Լ՝օնտոն մանուկ մը ծնաւ, որուն փորը ուռեալով մեռաւ։ փորին մէջ ուրիշ երախայ մ՝ալ գտնուեցաւ (1)։

Ֆիլիպեան կղզիներուն մէջ և ուրիշ մէկ քանի տեղ պոչով մարդ տեսնուած է։ մարդս ընդհանրաբար ոսկորէ պոչ մը ունի 2 բթաչափի չափ, որ դուրսէն չերևիր։

Վ՝ենց մատով տղաք շատ տեսնուած կան, նմանապէս Սպիտակամորթներուն ցեղը և ուրիշ շատ զարմանալի ձևով մարդեր կրնան ըլլալ։

Որձուէգութիւնը (հերմոֆրոտիթ) զանազան կենդանեաց վրայ կը գտնենք Վ՝ասն զի չէ թէ միայն բոյսերը արուէն, հապա նաև անասունները։ ինչպէս

---

(1)։ Ասանկ 1809ին հաւկիթի մը պատահեցաւ, շատ հեղ՝ էմնի ու նարինջի կը պատահի։

է ոստրէն, ուլականքը, և են։ Որձուէգուա-թիւնը կրնայ մարդու ալ ըլլալ, ինչպէս Անկոլայէն Լենդանի մը բերուեցաւ Լոնտոն, որն որ որձուէգ մ'էր (1)։

Գաղղիոյ մէջ երեք եղբարք կային, որոնց մէկը երեք ամորձիք ունէր, երկրորդը մէկ և միւսը ամենևին։

Աշխարհիս վրայ ընդհանրաբար խոշոր կենդանիները տեսնելով անոնք կը ճանաչենք աշխարհիս բնակիչ, բայց առ խոշորացոյցը ձեռքդ և քննէ միայն մէկ կաթիլ ջուր մը, և կը տեսնես թէ ի՞նչ աշխարհ կը բացուի աչքիդ առջև։ Ամ-յիրաւի բերանաբաց զարմացմամբ կը մնանք տեսնելով անթիւ և անհամար ու զանազան ձևերով կենդանի էակներ։ Ասոնք կը կոչուին Մանրաձգիք։ Ասոնց շատը անանկ մանր են, որ եթէ շարժում չունենան՝ անկարելի է որոշիլ թէ կենդանի են։ Ձևերնին զանազան է, ոմանք օձաձև են, ոմանք եղջիւրաւոր, ուրիշները խխունջի կը նմանին, ոմանք

---

(1)։ Տես Հատոր Դ Հասարակաց Թանգարանին

ձևեր կ'ունենան, են, են։ Ջափաղանց կերպիւ բազմաձին են, ու անանկներ կան մէջերնին, որ ժամու մը մէջ, և ո-մանք վայրկենի մէջ կը ծնանին, կ'ապ-րին, իրենց նմանը կ'արտադրեն և կը մեռնին։

Երկրիս մէջերէն ելած կաւիճերուն և ուրիշ քարերուն մէջ շատ կան ասանկ քարացած մանրաձձիները։ Ձկանց, թռչունները, կենդանեաց ու մարդուս աչքին ջրերուն մէջն ալ կը գտնուին մանրաձձիներ. մանաւանդ թուքին մէջ միլիոնաւորներ կան, և ակռային կպած աղտը թուքին մէջ գտնուած մանրաձձիներուն սատակներն են։ Պականեալ տնկերու վրայի ջրոց մէջ միլիոնաւոր մանրաձձիներ կան, որոնց մեծութիւնը գծէ մը 2000 անգամ աւելի պզտիկ է։ Տեսակ մը ջրաձձի կայ, որ օրուան ամեն մէկ ժամերուն գոյներնին կը փոխեն։

Մարդու, ձիի, փղի, էշի, են. կենդանեաց սերմին մէջն ալ մանրաձձիներ գտնուեր են տարբեր ձևերով։

Հազար 825ին Սուիսի Մորադ լիճը

յանկարծ կարմրեցաւ. ասիկա զննեցին և տեսան որ մանրաձձիներէ յառաջ կը գայ։ Կարմիր ծովուն ջրին քիչմը կարմիրի միտելը՝ իրեն մէջը գտնուած մանրաձձիներէն, բուսական և հողային նիւթերէ յառաջ կը գայ։ Ամերիկայի մէջ կը գտնուին մէկ քանի սանդ կարմիր գունով ծովակներ.

Աչաց գունաւորութիւնը թէ մարդկանց և թէ կենդանեաց կրնայ փոփոխական ըլլալ, որ ուրիշ բանէ կախում չունի, բայց եթէ Երակամաշկը գունաւորող ընդհանրապէս սև նիւթին ուրիշ գունով խառնուելէն։ Մարդ ընդհանրապէս սև կամ կապոյտ աչք կ'ունենայ, սակայն կաքաւի պէս կարմիր աչքով մարդեր ալ կան, ինչպէս Սպիտակամորթները։

Երկու աչքերը իրարմէ տարբեր գունով թէ մարդ և թէ ուրիշ անասուն կրնայ ըլլալ։

Մազերը գլխին մէջ խորապէս հաստատեալ արմատ ունին և խողովակ են և անկիւնաւոր.

Եղած է և կրնայ ըլլալ որ մարդոց ընդունին ու սրտին վրայ մաղ բուսնի։
Յանկարծական սաստիկ վախերէ մարդուս մազերը բոլորովին կը ճերմկին։

Պողիպոտները սառնորակ կենդանիներ են, իրենց կազմութիւնը շատ պարզ է, և զարմանալի յատկութիւն մը ունին։ Քանզի պողիպոդի մը մարմինը քանի կըտորը որ բաժնես՝ ամեն մէկ կտորը մէկ մէկ կատարեալ պողիպոդ կը կազմուի։ Եւ իրենց բնականաբար աճելու և բազմանալու կերպերնին ալ սասանկ է։
Կենդանաբոյսերն ալ նոյն յատկութիւնը ունին։

Տեսակ մը ձուկ կայ որ Սումադրայի, Ռաւայի, և Պենկալայի մէջ կը գտնուի։ Ասիկա Թռչող ձուկերու նման կրնայ ըրէն դուրս ելլել, 5—6 օր ապրիլ, մանաւանդ թևերուն փուշերուն օգնութեամբը ծառը ելլել։

Փիները նաւակալ անունով ձուկ մը կը ցուցնէին, որուն համար կ'ըսէին որ եթէ նաւերու փակչի՝ անանկ զօրութիւ

մը կը քաշէ զնաւը, որ նաւը կը կենայ՝ թէև հողմուռոյց առագաստներով ըլլի. ասիկա յայտնի սխալէ. յիրաւի կայնաւակալ անուամբ ձուկ մը, որ նաւերուն եթէ փակչի գլխին վրայի խեցիովը՝ անկարելի է բռնի զան հոնկէ հանել, բայց անկարելի է նաև որ ինքը կարենայ նաւ մը իր ընթացքէն կեցընել.

Շատ հեղ կը տեսնենք որ ահագին բարձրութենէ սարդերու թելեր երկնցուած է, շատ հեղ մէկ տունէն միւսը։ Այս գործողութիւնը սարդը ընելու համար՝ իր խէժէն կտոր մը կը փակցընէ եղած տեղին, ետքը ինքը վար կը կախէ իր թելովը. հովը երբ փչել ըսկսի, սարդն ալ կ'երերցընէ և հեռի տեղ մը տանելուն պէս՝ հոն կը կենայ սարդը, և իր թելը հոն ալ կը փակցընէ, կերկնցնէ և կը ցկտէ։ Ահա այս կերպիւ սարդերը. տեղէ տեղ, ծառէ ծառ, ևն, կը տեղափոխուին։

Արգելիտ ժողվելու համար ծովուն յատակը իջնող լուղորդերը կրնան մինչ

1/2 ժամ ջրին տակը մնալ, ընչառութիւնին բռնելով։

Շերամին խոզակը երկու հատ իրարու փակած մեկ թելէ շինուած է, և ամ թելը 1000 կանգուն երկարութիւն կ'ունենայ։

Մեքսիկոյ Ինտ լեռներուն հրաբուխներէն անթիւ ձուկեր դուրս կը նետուին, որոնք Ընդերկրական լճերուն մէջ եղած ձկերն են։

Թիթեռնիկները և անոնց զանազան ցեղերը եթէ հասարակ աչքով նայինք՝ 2 աչք ունին, իսկ եթէ խոշորացուցով քննենք՝ 2 աչքերուն մեկը կը գտնենք որ 17,000 աչքի ոսպերէ կը բաղկանայ, և ամեն մեկ ոսպը բուն աչքի կատարեալ զօրութիւնը ունենալով։

Թռչունները երկերկու՝ ստամոքս ունին, վասնզի ակռայ չունենալնուն՝ չեն կրնար կերածնին մանրել, որով և դիւրաւ մարսել, հապա երկու ստամքս ու

նենալովինին՝ կլլած նիւթերին առջինին մէջ կը զանգի, և երկրորդին մէջ բոլորովին կը խմորուի։

Ուղտին, ևն. կենդանեաց որոճալը իրենց ներքին ստամոքսային կազմուԹենէն յառաջ կը գայ։

Երկար ատենէ 'ի վեր կը կարծուէր, և մինչդեռ հիմա կայ ան մոլար դրուԹիւնը, որ մժեղերը (սինէք), ևն. ճճիները աղբէ, և ապականուԹենէ կը գոյանան. ասիկա մտաց և բնուԹեան դէմ է։ Ճճիներուն աղբէ և անմաքրուԹենէ յառաջ կը գայ ըսելին անոր համար է որ ճանճերը իրենց հաւկիԹերը աղբերու մէջ կը դնեն, և աղբ շատ եղած տեղը շատ մժեղ գտնուիլը իրենց աղբով շատ սնանիլնէն է։

Գորտը ու գորտի տեսակ կենդանիներ կան՝, որոնք բոլոր ձմեռը գետնի տակ, գոց տեղուանք Թմրած կը մնան իբր մեռած։

ԸնդաբուժուԹիւնը ան արհեստն է, որով կրնան կտրած և կրճատեալ քի-

թերը նորոգել ուրիշկտոր մը միս փակ-
ցնելով անոր կտրուած տեղը։

Շրթունքերն ալ ասանկ կրնան ընել։

Որովայնախօսութիւնը (վանթրըլօք)
զուարճալի արհեստներէն մէկն է։

Որովայնախօս մը քեզի ձնանկ կ'երևց-
ընէ թէ տուներուն և ջրհեղեղներուն
տակէն անունդ կը կանչեն. սնտուկերու
մէջէն շուներ կը հաչեն, ևն, ևն, ան-
թիւ խաբեբայ եղանակներ։ Այս ար-
հեստը մարդուս կազմուածքեանը վրայ կը
կայանայ, և ամեն մարդ չի կրնար ընել։

Հին ժամանակը քուրմերը ասոր արհես-
տիւ իրենց կեցած տեղերէն իբր կուռ-
քերուն բերանէն պատգամ կը տային։

Մարդս քանի որ տարիքը առնէ, այն-
չափ ալ ոսկրները դիւրաբեկ կ'ըլլան։

ԻՆՉՊԵՍ ԷՐ ԵՍՏԵՍԻՐՈՒԹԵԱՆ

Եգիպտական նշանագիր

Սիրել, Տիրել

Ջաղել

Սրինդի

Դանիբանությունը համառոտ

Երիբանությունը „

Զգուշությունը „

Վիմբանությունը „

Ելիկրությունը և
Կալվանությունը „

Վենդանությունը „

Ի ՆԱԻԻՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵՆՆ

Եգիպտական նշանագիրք
Սիպէլ, Տիեղէր
Ջապէլ
Սաբինին
Տիգրանո-հի
Գանիմեանո-ի-ն համա-օպ
Եշիրեանո-ի-ն „
Զգողեանո-ի-ն „
Վիմեանո-ի-ն „
Ալիկարեանո-ի-ն և
Կալվանեանո-ի-ն „
Կենդանեանո-ի-ն „
Բոսեանո-ի-ն „
Ջերմեանո-ի-ն „
Աղջեանո-ի-ն „
Ապղեանո-ի-ն „
Լոսեանո-ի-ն „
Անգինեանո-ի-ն „
Մասրեանո-ի-ն „
Նմանեանո-ժո-ի-ն „
Փոնարեանո-ի-ն „
Զայնեանո-ի-ն „